ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# TBC ԲԱՆԿԻ «ՍԹԱՐԹԱՓ» ԱԳՐՈՎԱՐԿԸ՝ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ



***TBC բանկի համար գյուղատնտեսությունը առաջնային ուղղություններից մեկն է: Այդ պատճառով, բանկը մշտապես փորձում է ագրովարկերի հարցում շահագրգռված անձանց ներկայացնել նորարարական նախաձեռնություններ՝ արտոնյալ պայմաններով: Անցյալ տարի TBC բանկը ագրովարկերի տեսքով միջոցներ առաջարկեց բազմամյա այգիների աճեցման համար: Իսկ բառացիորեն վերջերս առաջարկությանը ավելացվեց եւս մի բաղադրիչ, եւ ֆերմերները ագրովարկերից կարող են օգտվել նաեւ խաղողի այգիների հիմնման ժամանակ:***

***TBC բանկը ֆերմերներին եւս մի նորամուծություն է առաջարկում: Առաջին անգամ Վրաստանում գյուղատնտեսության հարցերով շահագրգռված անձինք հնարավորություն կունենան օգտվել նոր սպասարկումից՝ «Սթարթափ» ագրովարկից, կարող են օգտվել բարձր մթերատու անասունների ֆերմաների, արոտավայրերի, ձկնաբուծարանների, սառնարանային եւ պահեստային տնտեսությունների հիմնման համար:***

***Նոր առաջարկության մասին մանրամասն պատմեց TBC բանկի ագրոբիզնեսի ղեկավար Վեփխվիա Լոմինաշվիլին:***

***- TBC բանկի ագրովարկի սպասարկմանը մի նոր բաղադրիչ ավելացվեց, եւ ֆերմերները կարող են օգտվել խաղողի այգիների հիմնման համար ներդրումային միջոցներից: Ավելի մանրամասնեք՝ ի՞նչ արտոնություններից կարող են օգտվել ֆերմերները, եւ կոնկրետ խաղողի ո՞ր տեսակի այգիների հիմնման վրա է տարածվում այդ սպասարկումը:***

- TBC բանկի ագրովարկը սպասարկում է, որը վերաբերում է բացառապես գյուղատնտեսության ոլորտում աշխատող անձանց, ովքեր ցանկություն ունեն հիմնել կամ նորացնել բազմամյա այգիները եւ, միաժամանակ, օգտվել արտոնյալ ագրովարկերից: Իր բովանդակությամբ սպասարկումը «Սթարթափ» վարկ է, ինչը նշանակում է, որ ներկայացված սպասարկման հաշվարկումներն սկսվում են ոչ թե տվյալ պահից, այլ կանխագծվող բերքի առկայությունից, երկարաժամկետ արտոնյալ փուլի նախատեսմամբ: Ֆերմերների համար դա բնական է, մեծացնում է դրամական վարկային ռեսուրսի մատչելիությունը եւ նոր նախագծերի իրականացման հնարավորություն ընձեռում:

TBC բանկը ագրովարկը սպառողներին առաջարկեց անցյալ տարվա աշնանը՝ տխիլի, ընկույզի, խնձորի, նուշի, ելակի, մոշի եւ կիվիի այգիների հիմնման ֆինանսավորման համար: Յուրաքանչյուր վարկ տրվեց մի քանի տարվա արտոնյալ ժամանակահատվածով, արտոնյալ ագրովարկի շրջանակներում: Այս տարի, ոլորտի մասնագետների հետ խորհրդատվությունից հետո, որոշեցինք վերոնշյալ մշակաբույսերին ավելացնել նաեւ խաղողի որոշակի տեսակներ ընտրյալ տարածաշրջանների համար. Կախեթիի համար՝ միկրոզոտային սափերավին, խիխվին եւ քիսին են, Շիդա Քարթլիի համար՝ գորիական կանաչը, չինականը, շավկոպիտոն, թավկվերին, սպիտակ բուդուշուրին, Իմերեթիայի համար՝ օցխանի սափերավին, կախուրան, ցոլիկաուրին, Սամեգրելոյի համար՝ օջալեշին, Գուրիա-Աջարիայի համար՝ չխավերին, իսկ Ռաճայի համար՝ ալեքսանդրականն ու մուրջուրեթուլին:

***- Ինչո՞ւ ագրովարկի սպասարկմանը ավելացվեց այդ բաղադրիչը, եւ որքանո՞վ է մեծ սպառողների կողմից խաղողի այգիների հիմնման պահանջարկը:***

- TBC բանկի կողմից գյուղատնտեսության արագ եւ պատասխանատու ֆինանսավորումը մեր գլխավոր առաջնահերթային ուղղություններից է: Մենք մշտապես ուսումնասիրում ենք այդ ոլորտը եւ փնտրում այն ուղղությունները, որոնք ունեն խոստումնալից արտադրականտնտեսական ներուժ ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային շուկայում:

Գտնում ենք, որ այսօր Վրաստանում խաղողագործությունը վերելք է ապրում: Ունենք խաղողի բացառիկ տեսակներ, որոնցից պատրաստած գինիներն ավելի ու ավելի մեծ պահանջարկ են վայելում, եւ այդ պահանջարկը տարեցտարի ավելանում է: Հենց այդ հանգամանքների հաշվառմամբ, որոշում ընդունվեց ագրովարկերին այդ բաղադրիչի ավելացման վերաբերյալ:

***- Ագրովարկից օգտվելիս՝ ի՞նչ պայմաններ է բավարարելու ֆերմերը խաղողի այգու հիմնման համար:***

- Մյուս բազմամյա մշակաբույսերի օրինակով, այստեղ էլ ներկայացված են երեք հիմնական պահանջներ՝ առաջինն ու ամենակարեւորը բազմամյա այգիների հիմնման-խնամքի փորձն է, երկրորդը՝ հողատարածքը, որտեղ ծրագրվում է ներդրումների իրականացումը, պետք է լինի վարկ ստացողի սեփականության ներքո, եւ երրորդը՝ վարկային լավ պատմությունը, դրա առկայության դեպքում:

***- Գյուղատնտեսության ուղղությամբ TBC բանկը եւս մի նորամուծություն ունի: Առաջին անգամ Վրաստանում TBC բանկը գյուղատնտեսության ոլորտի հարցերով շահագրգռված ֆերմերներին առաջարկում է նոր սպասարկում՝ «Սթարթափ» ագրովարկ: Ո՞ր ոլորտները կֆինանսավորվեն «Սթարթափ» ագրովարկերով, եւ ո՞վ կարող է օգտվել սույն սպասարկումից:***

- Դուք ճիշտ նկատեցիք՝ «առաջին անգամ Վրաստանում»: Ինչպես ագրոներդրումային վարկի դեպքում, TBC բանկը այս անգամ եւս շուկայում առաջին բանկն է, որը ֆերմերներին հնարավորություն է ընձեռում «Սթարթափ» ագրովարկի շրջանակներում սկսել եւ զարգացնել իրենց գործունեությունը գյուղատնտեսության այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են՝ բարձր մթերատու անասունների եւ մեղվաբուծական ֆերմաները, բարձր տեխնոլոգիական արոտավայրային տնտեսությունը, ձկնաբուծական տնտեսությունը, մթերքների պահման սառնարանային եւ պահեստային տնտեսությունները:

Այս սպասարկումից կարող են օգտվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ իրավաբանական անձինք, անկախ նրանից, ներկա դրությամբ ֆինանսապես ապահովվա՞ծ են վերցված վարկի մարման համար:

Մենք ելնում ենք վարկավորման չափորոշային մոտեցումից եւ, «Սթարթափ» ագրովարկի նախագծի շրջանակներում, հենվում ենք վարկը ստացողի ոչ թե ընթացիկ, այլ կանխագծված այն եկամուտի վրա, որը տնտեսությունը կստանա նախագծի իրականացման դեպքում: Նման մոտեցմամբ, մենք մեծացնում ենք դրամական ռեսուրսների նկատմամբ մատչելիությունն այն անձանց համար, ովքեր ներկա դրությամբ դրա հնարավորությունը չունեն:

***- Ի՞նչ պայմաններով է տրվում «Սթարթափ» ագրովարկը, եւ ի՞նչ արտոնություններից են օգտվում ֆերմերները: Ո՞րն է նվազագույն եւ առավելագույն նշագիծը. ֆերմերները ֆինանսական ի՞նչ գումարի աջակցություն կարող են ստանալ:***

- «Սթարթափ» ագրովարկի նվազագույն գումարը 20 000, իսկ առավելագույնը՝ 500 000 ԱՄՆ դոլարին համարժեք լարին է: Վարկը կարելի է ստանալ ինչպես ազգային, այնպես էլ՝ օտարերկրյա տարադրամով: Ֆինանսավորվում է ինչպես նախագծի իրականացման համար անհրաժեշտ հիմնական, այնպես էլ՝ շրջանառու միջոցները: Վարկի առավելագույն ժամկետը 7 տարի է:

Ինչպես ագրոներդրումային վարկի դեպքում, այստեղ էլ շահագրգռված անձանց առաջարկում ենք երկարաժամկետ արտոնյալ ժամանակահատված, որը հաշվարկված է տարբեր ոլորտների համար եւ սահմանվում է՝ ելնելով նրանից, թե որքան ժամանակ է պահանջվում, որպեսզի իրականացված ներդրումները սկսեն տնտեսական շահույթ բերել: Արտոնյալ ժամանակահատվածում վարկակալը վարկի հիմնական գումարի մարում չի իրականացնում:

Բացի այդ, հիմնական միջոցների նպատակային վերցված վարկերը կարող են տրվել արտոնյալ ագրովարկերի նախագծի շրջանակներում, եւ վարկակալը ստանա տոկոսների համաֆինանսավորում գյուղատնտեսության նախարարությունից, ինչը բնականաբար, է'լ ավելի է մեծացնում նախագծի գրավչությունը:

***- Գոյություն ունե՞ն, արդյոք, առանձին պահանջներ/սահմանափակումներ սպասարկումից օգտվելու հարցում:***

- Բնականաբար, սույն սպասարկման շրջանակներում ունենք նվազագույն պահանջներ, որոնց բավարարումը պարտադիր է վարկի դիմումի քննարկման համար: Պարտադիր պայման է, որ վարկակալը ունենա գյուղատնտեսության կոնկրետ այդ ուղղությամբ աշխատանքի որոշակի փորձ, որտեղ մտադիր է իրականացնել ներդրումները: Միաժամանակ, վարկակալից պահանջում ենք նախագծի համաֆինանսավորում, ինչը կազմելու է նախագծի հիմնական արժեքի 40 տոկոսից ոչ պակաս: Թեպետ դա չի նշանակում, որ վարկակալը կարող է համաֆինանսավորում իրականացնել միայն դրամական միջոցներով: Համաֆինանսավորման գումարում հաշվի ենք առնում բոլոր այն ակտիվները, որոնք գտնվում են վարկակալի տնօրինության ներքո եւ կարող են օգտագործվել ծրագրված նախագծի իրականացման համար: Համաֆինանսավորման մեջ հաշվարկվում է նաեւ ձեռք բերած դրամաշնորհի գումարը, հողատարածքը, որտեղ ծրագրում է ներդրման իրականացումը, նաեւ դա պետք է լինի վարկակալի սեփականության ներքո:

Սրանք այն հիմնական չափորոշիչներն են, որոնց վրա դիմումի քննարկման ժամանակ՝ բիզնես-ծրագրի հետ, առանձնակի ուշադրություն է դարձվում:

***- «Սթարթափ» ագրովարկը իր պայմաններով շատ է հիշեցնում ագրոներդրումային վարկ: Ինչո՞վ են տարբերվում այդ երկու սպասարկումները:***

- Ըստ բովանդակության, երկուսն էլ նման են միմյանց, թեպետ ագրոներդրումային վարկը նախատեսված է կոնկրետ բազմամյա մշակաբույսերի այգիների հիմնմանը, իսկ «Սթարթափ» ագրովարկը, բացառությամբ բազմամյա մշակաբույսերի, ներառում է բոլոր այն ոլորտները, որոնց մասին արդեն նշեցի:

***- Ի՞նչ սպասումներ ունեք նոր սպասարկման հարցում, եւ մոտ ժամանակներում ի՞նչ ծրագրեր եք կազմել գյուղատնտեսության ոլորտի զարգացման ուղղությամբ:***

- Փորձը ցույց է տալիս, որ «Սթարթափ» վարկերի նկատմամբ պահանջարկը մեծ է: Դրա վկայությունը ագրոներդրումային վարկն է, որի շրջանակներում TBC բանկը ֆինանսավորեց, աճեցվեցին մի քանի տասնյակ այգիների հիմնումը: Հետեւաբար, հուսով ենք, որ «Սթարթափ» ագրովարկի նախագիծն էլ, ագրոներդրումային վարկի օրինակով, կլինի արդյունավետ:

Ինչ վերաբերում է առաջիկա ծրագրերին, մեր նպատակն է առավելագույն աջակցել երկրում գյուղատնտեսության զարգացմանը, եւ ֆերմերներին առաջարկել այնպիսի սպասարկումներ, որոնք նրանց տնտեսության զարգացմանը իրատեսական հնարավորություն կվերապահեն:

Այդ ուղղությամբ մենք ուսումնասիրությունները շարունակում ենք, սպառողներին ավելի շատ նորամուծություններ կառաջարկենք:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*



ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԽՈՐՀՈՒՐԴ

## ՀԱՐԿ ՉԿԱ, ՈՐ ԾՆՈՂԸ ՆԱԽՕՐՈՔ ԻՄԱՆԱ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԸ




***Որքանո՞վ է արդարացված ծնողներին երեխայի սեռի մասին տեղեկատվության հանձնումը: Ըստ իս, դա միայն արգելակիչ գործոն է ընտանիքի ամրացման հարցում:***

***Վ. Հայրապետյան***
***Թբիլիսի***

Երեւի, դուք իրավացի եք: Ավելին, Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն հայտարարել է, որ նախարարությունը խորհուրդ է տվել ծնողներին չհայտնել երեխայի սեռը: Այս հայտարարությամբ նախարարն արձագանքել է ընտրովի հղիության արհեստական ընդհատման վիճակագրությանը:

Ըստ Դավիթ Սերգեենկոյի, երեխայի սեռը նախապես ճշտելը որոշակիորեն ազդում է ծնողների որոշման վրա, երբեմն դա հանգեցնում է հղիության արհեստական ընդհատման:

- Մինչեւ հղիության որոշակի ժամկետը, խորհուրդ է տրվում, որ բժիշկները չասեն երեխայի սեռը, քանի որ դա երբեմն վերջանում է հղիության արհեստական ընդհատումով, ինչը պարզապես անընդունելի է: Տարիներ առաջ մենք խորհուրդ էինք տալիս չասել երեխայի սեռը: Բժիշկների մի մասն աշխատում է պահպանել դա, ցավոք, մեծ մասը չի հետեւում խորհրդին, եւ կարեւոր է, որ այդ էթիկետն ամենուր պահպանվի հղիների դեպքում,- հայտարարել է Սերգեենկոն:

Վիճակագրության համաձայն, 2016 թ. Վրաստանում ծնվել է 56 500 երեխա: Նրանցից 28 800-ը տղա է, 27 600-ը` աղջիկ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ԿԱԶՄՎԵԼ Է ԱՆՎՏԱՆԳ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

***International SOS բժշկական ծառայությունների ընկերության աշխատակիցները կազմել են աշխարհի ինտերակտիվ քարտեզ, որի վրա նշված են ճանապարհորդների համար ամենավտանգավոր եւ անվտանգ երկրները:***

Ընկերության կայքում զետեղված քարտեզի վրա պետությունները նշված են տարբեր գույներով` կախված այն վտանգի աստիճանից, որն սպասում է զբոսաշրջիկին:

Այցելության համար առավել վտանգավոր երկրները նշված են կարմիր գույնով. դրանք են` Սիրիան, Մալին, Լիբիան, Հարավային Սուդանը, Եմենը, Աֆղանստանը եւ Սոմալին: Զբոսաշրջիկների համար առավել անվտանգ պետությունները նշված են կանաչ գույնով: Դրանց թվում են Ֆիլիպինները, Նորվեգիան եւ Իսլանդիան:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆԸ



***Ավելի քան 15 հազար գիտնական իր ստորագրությունն է դրել մարդկությանն ուղղված երկրորդ նախազգուշացման տակ` փորձելով ուշադրություն հրավիրել էկոլոգիական կործանարար փոփոխությունների վրա:***

Առաջին ուղերձը հայտնվել էր 1992 թվականի վերջին. դրա տակ ստորագրել էին 1,7 հազարից ավելի գիտնականներ, այդ թվում` նոբելյան դափնեկիրներ: «Նախազգուշացում մարդկությանը. աշխարհի գիտնականներից» մանիֆեստում նրանք պատմել էին, որ մոլորակի բնակչությունը բնության հետ առճակատման ուղեգիծ է բռնել: Հետազոտողներն անհանգստացել են այն վնասի չափից, որն արդեն Երկրին հասցնում կամ կարող են հասցնել այնպիսի երեւույթներ, ինչպիսիք են` օզոնի շերտի նոսրացումը, օվկիանոսների ֆլորայի եւ ֆաունայի ոչնչացումը, անտառների անհետացումը, կլիմայի փոփոխությունը:

Այս մանիֆեստի հրատարակման 25-րդ տարեդարձի առթիվ, որոշվել է թողարկել երկրորդ նախազգուշացումը: Այս անգամ դրա տակ ստորագրել է աշխարհի 184 երկրների ավելի քան 15,3 հազար գիտնական: Տրամադրելով համապատասխան վիճակագրությունը` հետազոտողները հայտարարում են, որ քառորդ դարի ընթացքում մարդկությանը չի հաջողվել լուծել բնապահպանական խնդիրները, դեռ ավելին, դրանցից շատերն ավելի են լրջանում, նշվում է մանիֆեստում:

Միեւնույն ժամանակ, գիտնականները փաստաթղթում նշել են առանձին հաջողություններ, մասնավորապես, ամբողջ աշխարհում օզոնաքայքայիչ նյութերի քանակի նվազումը: Դա, նրանց կարծիքով, վկայում է այն մասին, որ մարդկությունը կարող է բարեփոխել աշխարհը, եթե գործի վճռականորեն:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԾԽԵԼՆ ՈՒ ԱՐԿՈՀՈԼԸ ԱՐԱԳԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԾԵՐԱՑՈՒՄԸ

***Մեծ քանակությամբ ալկոհոլի եւ ծխախոտի օգտագործումը, իրոք, հանգեցնում է այն բանին, որ մարդիկ սկսում են ծերանալ «արտաքուստ» եւ իրենց տարիքից անհամեմատ ավելի մեծ են երեւում: Այդ մասին բժիշկները հայտարարում են Journal of Epidemiology & Community Health հանդեսում հրապարակված հոդվածում:***

- Մեզ առաջին անգամ հաջողվեց ցույց տալ, որ ոգելից խմիչքները եւ սիգարետները արագացնում են մարդու դեմքի եւ մարմնի նկարագրում այն առանձնահատկությունների հայտնվելը, որոնք սովորաբար կապվում են ծերության հետ: Դրա հետեւանքով, ծխախոտի եւ ոգելից խմիչքների սիրահարներն իրենց տարիքից զգալիորեն ավելի մեծ են երեւում: Դա կարող է լինել այն բանի հետեւանքը, որ ե'ւ այս, ե'ւ այն սովորույթը կարող է արագացնել ամբողջ մարմնի ծերացումը,- հայտարարել է Կոպենհագենում Հարավային Դանիայի համալսարանի աշխատակցուհի Աննա Շոուն:



Վերջին տասնամյակում գիտական մամուլում հայտնվել են մի քանի տասնյակ ուսումնասիրություններ, որոնց հեղինակները հայտարարում էին ալկոհոլային խմիչքների օգտագործման եւ մի շարք օրգաններում քաղցկեղի զարգացման միջեւ կապի առկայության մասին:

Օրինակ. 2010 թվականին գիտնականները ցույց են տվել, որ մեծ քանակությամբ գարեջրի օգտագործումը կարող է արագացնել աղիների քաղցկեղի զարգացումը, 2011 եւ 2013 թթ. բացահայտել են կապը ալկոհոլի եւ կրծքագեղձի քաղցկեղի միջեւ: Մյուս դիտարկումները ցույց են տվել, որ ծխախոտի եւ ալկոհոլի զուգորդումն ուժեղացնում է վերջինիս քաղցկեղածին ազդեցությունը:

Շոուն եւ նրա գործընկերները մեծ քանակությամբ ոգելից խմիչքներ եւ սիգարետներ օգտագործելու եւս մեկ բացասական ազդեցություն են բացահայտել` վերլուծելով այն տվյալները, որոնք հավաքվել են սրտի եւ անոթների առողջության երկարատեւ դիտարկումների ընթացքում, որոնք Կոպենհագենի բնակիչների շրջանում կատարվել են 1976-ից մինչեւ 2003 թվականը:

Դանիայի սոցիալական ծառայությունները, որոնք անցկացրել են այս դիտարկումները, հետեւել են ոչ միայն 11 հազար դանիացիների արյունատար համակարգի առողջությանը, այլեւ ամենատարբեր տեղեկություններ են հավաքել նրանց նկարագրի, սննդակարգի եւ վնասակար սովորությունների մասին: Դա գիտնականներին թույլ է տվել գնահատել այն, թե ինչպես է մեծ քանակություններով ծխախոտի եւ ալկոհոլի օգտագործումն ազդում դանիացիների առողջության վրա:

Բացի լյարդի, թոքերի եւ մյուս օրգանների աշխատանքի տիպիկ փոփոխություններից, գիտնականները նկատել են մի քանի անսովոր բաներ, որոնք բնորոշ են մոլի ծխողներին եւ անզուսպ հարբեցողներին: Օրինակ, նրանցից շատերի մոտ հայտնվել են, այսպես կոչված, եղջերաթաղանթային աղեղներ` աչքերի եղջերաթաղանթի մեջ խոլեստերինի եւ այլ ճարպերի նստվածքներ, ինչպես նաեւ դեղնավուն թիթեղիկներ` կոպերի ու մաշկի մյուս հատվածների վրա, եւ կնճիռներ` ականջների բլթակներին: Շաբաթական միջին հաշվով 350 գրամից ավելի մաքուր սպիրտի օգտագործումն այս բոլոր շեղումների զարգացման հավանականությունը մոտավորապես 33-35 տոկոսով մեծացրել է ինչպես տղամարդկանց, այնպես էլ` կանանց շրջանում: Նմանօրինակ փոփոխություններ դիտվել են այն ծխողների շրջանում, ովքեր մի քանի տասնամյակի ընթացքում օրական 20-ից ավելի սիգարետ են օգտագործել:

Հետաքրքրականն այն է, որ մարդու նկարագրի այս բոլոր փոփոխությունները, ինչպես նշում են գիտնականները, սովորաբար բնորոշ են բոլորովին այլ կատեգորիայի մարդկանց` տարեցներին եւ գենետիկական տարբեր արատներ ունեցողներին, որոնք մարդուն ստիպում են ժամանակից շուտ ծերանալ եւ մեռնել դեռ պատանեկան տարիքում: Հետեւաբար, կարելի է խոսել այն մասին, որ ոգելից խմիչքների եւ ծխախոտի չարաշահումն իրոք ծերացնում է մարդու մարմինը, ընդ որում, ինչպես նշում են հետազոտողները, դա կարող է իր կնիքը թողնել մարդու թե' արտաքինի, թե' ներքինի վրա:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Սիրի'ր, բայց սիրո գերի մի' դառնա:

***ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ***
***(1875-1957)***
***Հայ բանաստեղծ***

Այն, ինչ հաճո չէ Աստծուն, չի կատարվի, ինչ էլ լինի:

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(XII-XIIIդար)***
***Վրաց բանաստեղծ***

Այն տունը, ուր գրքեր չկան, նման է հոգուց զուրկ մարմնի:

***ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ***
***(1828-1910)***
***Ռուս գրող***

Մարմնամարզությունը բժշկության բուժիչ մասն է:

***ՀԻՊՈԿՐԱՏ***
***(մ.թ.ա.460-մ.թ.ա.377)***
***Անտիկ հին հույն բժիշկ, փիլիսոփա***

Ամենամեծ հարստությունը ագահության բացակայությունն է:

***ՑԻՑԵՐՈՆ***
***(մ.թ.ա.106- 43)***
***Հին հռոմեական քաղաքական գործիչ, փիլիսոփա***

Իսկական կինն ամեն ինչ կարող է ինքնուրույն անել, բայց իսկական տղամարդը երբեք չի կարող դա թույլ տալ:

***Ա.ԴՈԴԵ***
***(1840-1897)***
***Ֆրանսիացի վիպասան եւ թատերագիր***

Մարդ պետք է սովորի ենթարկվել ինքն իրեն եւ հնազանդվել իր վճիռներին:

***Ա.ՂԱԶԱՐՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Մի մարդ գալիս է բժշկի մոտ:*

*- Բժի'շկ, երեխա չենք ունենում:*

*- Մի' անհանգստացեք, կստուգենք, կիմանանք ի՞նչն է խնդիրը, կբուժենք...*

*- Ես գիտեմ, ինձնից է: Ախր հայրս էլ երեխա չէր ունենում, պապս էլ, նրա հայրն էլ ...*

*- Բա դու որտեղի՞ց ես:*

*- Ե՞ս, ես Կիրովականից եմ:*

*☺ - Սիրուշ տատ, ո՞վ ա եղել առաջին տղամարդը,- հարցնում են մի տատիկի:*

*- Վերի թաղի Կոստանը,- պատասխանում է Սիրուշ տատը` մի փոքր կարմրելով:*

*☺ - Վարդան ջան, պապան ո՞նց ա:*

*- Համո բիձիկ, պապան չորս ամիս առաջ մեռել ա...*

*- Յա՜, թաղել ե՞ք...*

*☺ - Կանեփը ծա՞ռ է, թե՞ թուփ:*

*- Կանեփը ծառ է, պարզապես չեն թողնում մեծանա...*

*☺ Մեկին հարցնում են:*

*- Մեքենայի վրա գազ կա՞...*

*- Գազ էլ կա, կոնուս էլ, տոռմուզ էլ...*

## ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

# ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սկիզբը` 1-ին էջում)

Ստորագրման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ ԵՄ մայրաքաղաքի «Եվրոպա» մեծ ու խորհրդանշական կառույցում, Արեւելյան գործընկերության գագաթաժողովի շրջանակում:

Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով կողմերը հաստատակամություն են հայտնում ամրապնդել համապարփակ քաղաքական եւ տնտեսական գործընկերությունն ու համագործակցությունը` հիմնված ընդհանուր արժեքների եւ սերտ կապերի վրա, այդ թվում` բարձրացնելով Հայաստանի մասնակցությունը Եվրոպական միության քաղաքականությանը, ծրագրերին եւ գործակալությունների աշխատանքներին: Համաձայնագրով նպատակ է հետապնդվում խթանել, պահպանել եւ ամրապնդել խաղաղությունն ու կայունությունը ե'ւ տարածաշրջանային, ե'ւ միջազգային մակարդակներով, այդ թվում` լարվածության աղբյուրները վերացնելու համար ջանքերը համախմբելու, սահմանային անվտանգությունն ուժեղացնելու միջոցով, ինչպես նաեւ միջսահմանային համագործակցությունն ու բարիդրացիական հարաբերությունները: Կընդլայնվի նաեւ շարժունակությունն ու տարբեր երկրների մարդկանց միջեւ շփումը:

Համաձայնագրում շեշտվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ եւ տեւական կարգավորման համար Հայաստանի հանձնառության կարեւորությունը, եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից վարվող բանակցությունների շրջանակներում այդ կարգավորմանը հնարավորինս շուտ հասնելու անհրաժեշտությունը:

Համաձայնագրում` որպես ընդհանուր սկզբունքներ, շեշտվում են ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը` ամրագրված, մասնավորապես, ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում եւ 1990 թվականի Նոր Եվրոպայի փարիզյան խարտիայում, ինչպես նաեւ մարդու իրավունքների վերաբերյալ համապատասխան այլ փաստաթղթերում, ինչպես օրինակ` ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան կազմում են Կողմերի ներքին եւ արտաքին քաղաքականության հիմքն ու սույն Համաձայնագրի կարեւոր տարրը:

Կողմերը վերահաստատում են ազատ շուկայական տնտեսության սկզբունքների, կայուն զարգացման, տարածաշրջանային համագործակցության եւ արդյունավետ բազմակողմանիության վերաբերյալ իրենց հանձնառությունը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ




*Նոյեմբերի 30-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը աշխատանքային այցով գտնվում էր Բելոռուսի մայրաքաղաք Մինսկում, որտեղ մասնակցեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) խորհրդի նիստին:*

Նախ անցկացվեց ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարների նեղ կազմով հանդիպումը, որին մասնակցեց նաեւ կազմակերպության գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովը: Նիստում քննարկեցին ՀԱՊԿ հետագա զարգացմանն ուղղված միջոցառումների ողջ համալիրը:

Կազմակերպության հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանի օրակարգում են նաեւ միջազգային իրավիճակի զարգացման միտումների, միջազգային անվտանգության արդիական խնդիրների վերաբերյալ քննարկումներ, ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի հետագա զարգացմանը եւ կազմակերպության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաեւ քարտուղարության եւ ՀԱՊԿ միասնական շտաբի կառուցվածքի, շտաբում զինծառայողների պաշտոնների քվոտայով բաշխման, 2018թ. ՀԱՊԿ բյուջեի ընդունման վերաբերյալ հարցեր:

Նստաշրջանի ընթացքում ընդունվեց Հավաքական անվտանգության պայմանագրի 25 եւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 15 ամյակների կապակցությամբ ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարների հռչակագիրը, ինչպես նաեւ ստորագրվեցին տեղեկատվական անվտանգության ոլորտում համագործակցությանն ու անօրինական միգրացիային հակազդելու միջոցների կատարելագործմանն առնչվող համապատասխան փաստաթղթեր: Նախագահները քննարկեցին ու հաստատեցին նաեւ «Մինչեւ 2025թ. ՀԱՊԿ Հավաքական անվտանգության ռազմավարության իրականացման ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Հիշեցնենք, որ Հավաքական անվտանգության խորհրդի կազմում գտնվող երկրներն են Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Բելառուսը եւ Տաջիկստանը:

# 170 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

*Եվրամիությունը 25 տոկոսով կմեծացնի Հայաստանի զարգացմանն ուղղվող աջակցությունը` տրամադրելով նաեւ տեխնիկական աջակցություն Հայաստանի եւ Եվրամիության միջեւ Համապարփակ ու ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման նպատակով, որը կկազմի ամենամյա գործողությունների ծրագրի մեծ մասը:*

Այդ մասին տեղեկացրեց Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին:

- Մինչեւ 2020 թվականը միասնական աջակցության շրջանակում կտրամադրվի 170 միլիոն եվրո: Սակայն, սա չի սպառում այն հնարավորությունները, որոնք կարող են բացվել այս համաձայնագրի ստորագրմամբ,- ասաց պաշտոնյան:

Անդրադառնալով համաձայնագրից բխող քայլերի կատարման արդյունքում սպասվող տնտեսական օգուտներին` Պյոտր Սվիտալսկին նկատեց, որ այս փաստաթուղթը պարունակում է նոր տարրեր, որոնք համադրելի են Առեւտրի համաշխարհային կազմակերպության ռեժիմի հետ, միեւնույն ժամանակ, կարող են ծառայել երաշխիք եվրոպացի տնտեսվարողներին ու ընկերություններին` մեծացնելու առեւտրի ծավալն ու ներդրումները Հայաստանում:

- Մենք հույս ունենք, որ այս տարրերը հանդես կգան որպես երաշխիք` վկայելով Հայաստանում գործարարության ժամանակակից, արեւմտյան չափորոշիչների մասին: Կարծում ենք, որ այս համաձայնագիրը խրախուսող դեր կունենա ընկերությունների համար,- ավելացրեց Պյոտր Սվիտալսկին:

# ՀԱՅԱՍՏԱՆԸ` ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

*Փարիզում ընթացող Ֆրանկոֆոնիայի նախարարների համաժողովին Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը նոյեմբերի 26-ին ստանձնեց 84 անդամ, ասոցիացված եւ դիտորդ պետություն ու կառավարություն միավորող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության` արտաքին գործերի նախարարների համաժողովի նախագահությունը:*




Համաժողովի ավարտին տեղի ունեցած հանդիսավոր արարողությանը, Մադագասկարի արտգործնախարար Անրի Ռաբարի-Նձական Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Էդվարդ Նալբանդյանին փոխանցեց Ֆրանկոֆոնիայի նախարարների համաժողովի նախագահությունը:

Հայաստանի արտգործնախարար, Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովի նախագահ Էդվարդ Նալբանդյանը, ՖՄԿ գլխավոր քարտուղար Միքայել Ժանը, Մադագասկարի արտգործնախարար Անրի Ռաբարի-Նձական եւ Ֆրանսիայի Եվրոպայի եւ Ֆրանկոֆոնիայի հարցերով պետքարտուղար ԺանԲատիստ Լեմուանը` Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովի արդյունքներով հանդես եկան համատեղ մամլո ասուլիսով:

## ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ` ՋՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՀԱՐՑՈՎ

*Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից Հայաստանի կառավարությանը ներկայացվելիք որոշման նախագծով, ջրի սակագնի 11,4 դրամով թանկացումը մանրածախ սպառողների համար կսուբսիդավորվի ողջ 2018 թվականի համար:*

*Սուբսիդավորման ֆինանսական միջոցները հայթայթվելու են պահուստային ֆոնդից:*

*2017թ. նոյեմբերի 22-ին ՀԾԿՀ-ն խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագինը 11,4 դրամով թանկացնելու որոշում ընդունեց, որն ուժի մեջ կմտնի 2018 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով Հայաստանի վարչապետի կողմից սպառողների համար ջրի սակագինը նույնը թողնելու հանձնարարականը` սպառողների համար ջրի վարձավճարը կսուբսիդավորվի: Հայաստանի ջրային տնտեսության պետական կոմիտեի ներկայացուցիչը ՀԾԿՀ նիստի ժամանակ հայտնեց, որ ջրի սակագնի 11,4 դրամ թանկացումը սուբսիդավորվելու է «Վեոլիա ջուր» ընկերության վարձակալության գումարների հաշվին, եւ որ իրենք սահմանված ժամկետում կառավարություն կներկայացնեն որոշման նախագիծը:*

## ՄՐՑԱՆԱԿ` ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ԱՅՐՈՒՆ

*Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը պոլսահայ լրագրող Հրանտ Դինքի այրուն` Ռաքել Դինքին, հանձնել է «Շիրակ» հիմնադրամի «Հակամարտությունների կանխարգելման մրցանակը», որին արժանացել է «Հրանտ Դինք» հիմնադրամը:*

*«Շիրակ» հիմնադրամի մեկ այլ` «Մշակույթ հանուն խաղաղության» մրցանակը շնորհվել է «Զուկակ» թատերական ընկերությանը, որը թատրոնի միջոցով նպաստում է Լիբանանի ճամբարներում ապրող փախստականների վերականգնողական ջանքերին:*

*«Շիրակ» հիմնադրամը ստեղծվել է 2008թ. Ֆրանսիայի նախկին նախագահ Ժակ Շիրակի կողմից` նպատակ ունենալով «աջակցել հակամարտությունների կանխարգելմանը, մշակութային երկխոսության հաստատմանն ու առողջապահության որակի բարելավմանն ուղղված ջանքերին»:*

## ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանում, 2017 թվականի հունվարից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում, 2940 ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով, զոհվել է 228, տարբեր աստիճանի մարմնական վնասվածք ստացել` 4352 մարդ: Ճանապարհային ոստիկանությունը հունվարից հոկտեմբեր արձանագրել է վարորդների կողմից վազանցի կանոնների խախտման 6049 դեպք: Ոստիկանության կողմից ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միջպետական եւ միջքաղաքային ավտոճանապարհներին տեղի ունեցող վթարների գերակշիռ մասը վարորդների կողմից վազանցի կանոնները խախտելու հետեւանք են:*

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(1դեկտեմբերի)

*Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է փարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 483,00 | 486,00 |
| ԵՎՐՈ | 573,00 | 580,00 |
| ՌՈՒԲԼԻ | 8,20 | 8,37 |

*Նոյեմբերի 24-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը ավելացել է 0,3 դրամով:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ԴԵԿՏԵՄԲԵՐ



***5.12.2017. Սուրբ Աբգար նախավկայի եւ Քրիստոսին հավատացող մեր անդրանիկ թագավորի հիշատակության օր***

Ըստ ավանդության, Սուրբ Աբգարը Ա դարի քրիստոնյա անդրանիկ թագավորն է, պարթեւ Արշակունի Արշամի որդին: Նրան անվանել են «ավագ այր», որովհետեւ բոլորից իմաստուն եւ հանճարեղ էր: Նրա մասին հիշատակել է պատմահայր Մովսես Խորենացին:

***9.12.2017. Հղություն Սուրբ Աստվածածնի***

Աստվածածնի մոր՝ Աննայի հղության հիշատակության տոնն է, որը բոլոր Արեւելյան եկեղեցիները նշում են դեկտեմբերի 9-ին, իսկ Կաթոլիկ եկեղեցին՝ դեկտեմբերի 8-ին:

## ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2017

# ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿ ԵՐԳԻՉՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՐԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՂԵՐԸ

***Նոյեմբերի 26-ին Թբիլիսիում, «Shine bright» («Շողա պայծառ») նշանաբանի ներքո, անցկացվեց «Մանկական Եվրատեսիլ-2017» 15-րդ հեղինակային միջազգային մրցաշարը: Մանկական երգի այդ փառատոնում հաղթեց Ռուսաստանը ներկայացնող երգչուհի Պոլինա Բոգուսեւիչը՝ «Թեւեր» երգով: Երկրորդ հորիզոնականը զբաղեցրեց Վրաստանը, որը ներկայացրեց 12-ամյա Գրիգոլ Կիպշիձեն՝ «Սրտի ձայնը» երգով: Երրորդ հորիզոնականում է Ավստրալիան: Մրցույթի հայաստանյան մասնակիցը՝ 9-ամյա Միշան, «Բումերանգ» երգով, ժյուրիի եւ առցանց քվեարկության արդյունքում, զբաղեցրեց վեցերորդ հորիզոնականը:***

Նշենք, որ Հայաստանի ներկայացուցիչը 12 միավոր ստացավ Կիպրոսից, 10-ական միավորներ վաստակեց Ալբանիայից, Ուկրաինայից, Ռուսաստանից, Լեհաստանից, Վրաստանից: Իսկ Հայաստանն իր 12 միավորը տվեց Վրաստանին:

Հատկանշական է, որ դիվանագիտական հարթության մեջ խնդիրներ ունեցող Ռուսաստանն ու Վրաստանն այս մրցույթում միմյանց փոխանցեցին ամենաբարձր՝ 12 միավորը:



ՊՈԼԻՆԱ ԲՈԳՈՒՍԵՎԻՉ



ԳՐԻԳՈԼ ԿԻՊՇԻՁԵ



ՄԻՇԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Այս տարի միջազգային մրցույթի քվեարկության կարգում կարեւոր փոփոխություններ էին տեղի ունեցել: Ըստ նոր կարգի, մասնակից երկիրը առցանց քվեարկության միջոցով կարող էր քվեարկել նաեւ իր պատվիրակի օգտին: Քվեարկությունը մեկնարկել էր նոյեմբերի 24-ից, www.junioreurovision.tv կայքում, որտեղ հնարավոր էր դիտել բոլոր 16 մասնակիցների ելույթների նախնական տարբերակները: Հեռուստադիտողը ելույթը դիտելուց հետո, հնարավորություն ուներ միաժամանակ քվեարկել 3, 4 կամ 5 մասնակցի օգտին:

«Մանկական Եվրատեսիլ-2017»-ին, բացի Վրաստանից եւ Հայաստանից, մասնակցեց եւս 14 երկիր՝ Ալբանիան, Ավստրալիան, Բելառուսը, Կիպրոսը, Իռլանդիան, Իտալիան, Մակեդոնիան, Մալթան, Նիդերլանդները, Ուկրաինան, Ռուսաստանը, Լեհաստանը, Սերբիան, Պորտուգալիան:

Նշենք, որ թեեւ Վրաստանն առաջին անգամ հյուրընկալեց այս մրցույթը, սակայն ամենաշատ՝ 3 անգամ հաղթանակ տոնած երկիրն է:

Հաջորդ՝ 16-րդ «Մանկական Եվրատեսիլը» կանցկացվի Մինսկում:

## ՍՊՈՐՏ

### ՔՈՒԹԱՅԻՍԻԻ «ՏՈՐՊԵԴՈՆ»՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՉԵՄՊԻՈՆ

Նոյեմբերի 27-ին, Վրաստանի ֆուտբոլի առաջնության վերջին տուրում, Քութայիսիի «Տորպեդոն» մրցակցի դաշտում նվազագույն՝ 1:0 հաշվով պարտության մատնեց իր գլխավոր մրցակից Թբիլիսիի «Դինամոյին» եւ, մեկ միավորով գերազանցելով մրցակցին, տասնհինգամյա ընդմիջումից հետո, չորրորդ անգամ նվաճեց երկրի չեմպիոնի կոչումը: Արծաթե մեդալները բաժին ընկան երկրի բազմակի չեմպիոն Թբիլիսիի դինամոյականներին: Առաջնության բրոնզե մեդալակիրներ դարձան «Սամտրեդիայի» ֆուտբոլիստները:

### ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ. ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Նոյեմբերի 27-ին եւ 29-ին Վրաստանի եւ Հայաստանի 15 եւ 16 տարեկան ֆուտբոլային թիմերը անցկացրին երկուական ընկերական հանդիպում: 15 տարեկանների մրցաշարում, երկու հանդիպումներում հաղթանակը տոնեցին վրաց պատանիները, համապատասխանաբար՝ 3:0, 1:0 հաշվով, իսկ 16 տարեկանների երկու հանդիպումներում գրանցվեց նվազագույն հաշիվ: Առաջին հանդիպմանը՝ 1:0 հաշվով, հաղթեցին վրաց մարզիկները, իսկ երկրորդում առավելությունը հայ պատանիների կողմն էր, եւ նրանք հաղթեցին 1:0 հաշվով:

### ՀԱՅՏՆԻ ԵՆ ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆԻ ԲՈԼՈՐ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԸ

Նոյեմբերի 25-ին հայտնի դարձան շախմատի աշխարհի չեմպիոնի հավակնորդների մրցաշարի բոլոր մասնակիցների անունները:

Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում կայանալիք մրցաշարին կմասնակցեն Լեւոն Արոնյանը, Շախրիար Մամեդյարովը, Ֆաբիանու Կարուանան, Ուեսլի Սոն, Վլադիմիր Կրամնիկը, Դին Լիժենը, Ալեքսանդր Գրիշչուկը եւ Սերգեյ Կարյակինը:

Հավակնորդների մրցաշարը տեղի կունենա 2018 թվականի մարտի 10-28-ը: Հաղթողն իրավունք կստանա մասնակցելու Մագնուս Կարլսենի դեմ աշխարհի չեմպիոնի կոչման մրցախաղին:

## ԽԱՉԲԱՌ




***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 2.Կենդանու բերան: 4.Կատար, ծայր: 7.Բույսերի ծաղկի սերմնարանից զարգացող գոյացություն, որի մեջ ներփակվում են սերմերը: 8.Քաղաք Ուկրաինայում: 9.Հայկական այբուբենի տառ: 10.Հեծյալ զորամաս, որ ուղարկվում էր թշնամու երկիրը՝ գերի եւ ավար բերելու: 14.«... ընկավ դռնեդուռ»: 16.Հացահատիկը դիզելու, կալսելու եւ մաքրելու տեղ: 18.Արու ձի: 22.Ինչպես: 24.Հին ռազմանավ: 25.Վրաստանի արդարադատության նախարար ... Ծուլուկիանի: 26.ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձան Մեքսիկայում՝ Չիչեն-...: 28.Կայսրուհի, արքայակին: 31.Կաթնաշոռ: 34.Մարջան, բուստ: 35.Անհիմաստ: 36.Իտալիայի կոմկուսի թերթը: 38.Բույս, որի ցողունից թել են պատրաստում: 41.Ընդունված վարվելակերպ: 44.Հունական դիցաբանության մեջ՝ մոռացության գետը ստորերկրյա աշխարհում: 45.Ամուսնու եղբայրը: 46.Պեպոյի քույրը: 48.Սնդարար հեղուկ, որն արտադրում են էգ կաթնասունների կաթնագեղձերը: 50.Աքլոր: 51.Իսպանիայի պատմական քաղաք, Համաշխարհային ժառանգություն: 52.Պարեն, մթերք: 53.Լցրու (ժող.):

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Քաղաք Հայաստանում: 2.Մագիլ, ճիրան: 3.Հեզ, հնազանդ: 4.Վարակիչ վիրուսային հիվանդություն: 5.Զինվորական վերարկու: 6.Կարճահասակ մարդ, գաճաճ: 11.Մարդ, որ հիանում է բարձրաշխարհիկ հասարակությամբ, ամեն կերպ նմանակում նրանց: 12.Ծուլություն: 13.Հանրահայտ կոմպոզիտոր, համաշխարհային դասական ... Խաչատրյան: 15.Գետ Նիդերլանդներում: 17.Հասարակական գործիչ, բառարանագետ Մանուկ ...: 19.Գրական ժանր: 20.Քիմիական տարր, օգտագործում են ապակու արտադրության, լուսանկարչության մեջ: 21.Հեղուկի փոքրագույն մասը: 23.Ցցապատ: 27.Հասարակածը եւ կենդանակերպը չորս հավասար մասերի բաժանող երկու մեծ բոլորակները: 29.Բարձրաձայն բղավել, աղաղակել: 30.Հավերժ: 32.Կարող: 33.Պարոն, տեր: 36.Թբիլիսիում ծնված հայ պատմաբան Արթուր ...: 37.Կինոյի եւ թատրոնի շվեդ ռեժիսոր ... Բերգման: 39.Գունավորել: 40.Գլխին փաթաթելու երկար, նուրբ կտոր, չալմա: 42.Հայոց եկեղեցու կուսակրոն հոգեւորականության ամենացածր աստիճանի վանական: 43.Շվեդ դերասանուհի ... Գարբո: 46.Խուքի մաս: 47.Փոքրիկ չվող թռչուն: 49.Հունգար բանաստեղծ եւ հրապարակախոս Էնդրե ...:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### *ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ*

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ապաքարց: 4.Վարդգես: 9.Ավազակ: 11.Նովել: 12.Եմ: 14.Վարդ: 15.Ետ: 16.Ջինա: 18.Սիղնախի: 20.Որակ: 22.Ով: 23.Նոթ: 24.Արփիկ: 28.Սի: 30.Ամարաս: 32.Շարա: 33.Գորի: 34. Աս: 35.Սիա: 37.Լենա: 40.Արփի: 41.Առկա: 43.Իսանի: 45.Րոպե: 47.Կոտե: 49.Յասեր: 51.Լոր: 52.Արա: 53.Ամ: 54.Նկար: 56.Ուր: 57.Նարդոս: 58.Մահարի: 61.Արքա: 62.Սիրուն:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ակամա: 2.Արագվի: 3.Ապավեն: 5.Այվազովսկի: 6.Դիլիջան: 7.Եթե: 8.Անդրի: 10.Կատակ: 13.Մռավ: 17.Իկոնա: 19.Ղրիմ: 21.Բաշինջաղյան: 25.Փամբակ: 26.Կարոտ: 27.Շագալ: 29.Րաֆֆի: 31.Սոսե: 32.Շահանե: 36.Արի: 38.Նիկո: 39.Ասորուհի: 42.Արենդա: 44.Ատ: 46.Որկոր: 48.Թագոր: 50.Ամառ: 52.Արին: 55.Ասք: 56.Ուրու: 59.Աս: 60.Ար:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445